

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ՝ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Posted on April 30, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Հովասափյան, Բեռլին, 30 Ապրիլ 2015

Բոլորովին էլ անտեղի չէ, որ տիկին Հրանուշ Հակոբյանը սփյուռքի Նախարար Է նշանակվել: Հայաստանի տնտեսության զարգացման համար նա մի հայտնագործություն մյուս հայտնագործությունից հետո է անում: Սփյուռքահայերին երևանում ժողովների Է հրավիրում, երևանի այգիներից մեկում, ազգային բարերարների պուրակ Է հիմնում: Արարում Է ազգային բարերարի կոչման և այլ շքանշաններ և սփյուռք այցելած ժամանակ, դրանք բարեհոգորեն և ձեռնբաց, այս կողմ այն կողմ Է շռայլում...

Բայց պետք Է խոստովանել, որ նրա վերջին հայտնագործությունը արդեն իսկ գլուխգործոց Է: Նա դիմում Է մեզ, քննադատողներին և կոչ Է անում.

«Ուրեմն բարի եղեք, օգնեք, որ տնտեսությունը զարգանա, թող մեկ միլիոն մարդ Հայաստանում հազար դուլար հաշվի համար բացի բանկում, բանկերում փող կգա, բանկերը կհզորանան, տնտեսությունը կզարգանա:»

Այո, հենց այդպես, իսկապես որ հանճարեղ հայտնագործություն, հանճարեղ գաղափար, իսկապես որ, որքան Է հեշտանում հանելուկը, այն լուծելուց հետո:

Տիկին Հրանուշ Հակոբյանին կիսնդրեի, լուծել նաև հետևյալ հանելուկը: Արդյո՞ք նա և Հայաստանի իշխանությունները այդքան են արբել իշխանական աթոռի հմայքից, որ չգիտե՞ն, թե ինչն Է Հայաստանի ժողովրդի աղքատացման, երկրի տնտեսության անկման և արտագաղթի պատճառները: Կիսնդրեի պարզել մի անհասկանալի հարց, այդ ինչպե՞ս Է լինում, որ իշխանության լծակի մոտ կանգնած անձնավորությունները և նրանց մերձավորները, հենց այդ աղքատ և թույլ բանկերի երկրում, մի քանի տարում միլիոնների արժեցող ապարանքների տեր են դառնում:

Տիկին Հրանուշ Հակոբյանին թախանձագին կիսնդրեի այդ հանելուկները լուծեն նախ իրենց համար, որովհետև հայ ժողովուրդը և՛ Հայաստանում և՛ սփյուռքում գիտի դրանց պատասխանները: Նա գիտի, որ որևէ երկրում, տնտեսությունը՝ ժողովներ գումարելով, շքանշաններ շռայլելով, արդեն իսկ իրենց սպառած ճոռոմ հայրենասիրական ճառերով, կամ «արի տուն» կոչերով, չեն զարգացվում: Այլ միայն ու միայն քաղաքական կայուն և իրավական պայմանների առկայության պարագաներում: Այն երկրներում, որտեղ օրենքը օրենք է, օրինականությունը՝ օրինականություն, օրենսդիր մարմինները անկախ են օրենք գործադրող մարմիններից, որտեղ անկախ դատարաններ գոյություն ունեն և որտեղ դրամատերերը, զոռբաները և կաշառակերները, կամ կաշառք տվողները, նրանց՝ իրենց ներքինին չեն դարձրել:

